



Հայաստանի կենսաբ. հանդես, 3(63), 2011

ԿԵՆՂԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՔՍՈՆՈՄԻԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՃՇԳՐՏՈՒՄԸ

Հ.Ջ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱԱ կենդանաբանության ինստիտուտ

Կենդանաբանական հայալեզու գրականության ուսումնասիրությունից պարզվեց, որ կարգաբանական անվանումներում դիտվում է անհստակություն, ինչը կարգաբանությունում անթույլատրելի է: Այսպես, նույն բառակազմական միավորը կիրառվում է տարբեր տաքսոնների կամ տարբեր բառակազմական միավորները՝ միևնույն կարգաբանական խմբի անվանումներում: Հոդվածում տրված է ողնաշարավոր կենդանիների տաքսոնոմիական միավորների անվանումների համեմատական վերլուծությունը և առաջարկված է դասերի, կարգերի, ենթակարգերի, ընտանիքների բառակազմական միավորների կիրառման միասնական համակարգ:

*Տաքսոնոմիական անվանումներ – վերլուծություն – տաքսոն –
միասնական համակարգ*

При изучении армянской зоологической литературы выяснилось, что нет четкости, определенности в таксономических названиях животных. Один и тот же словообразовательный аффикс применяется в названиях разных таксонов или разные словообразовательные аффиксы – в названиях одной и той же таксономической группы, что не допустимо в систематике. В статье проведен сравнительный анализ названий таксонов позвоночных животных и предложена единая система словообразовательных аффиксов классов, отрядов, подотрядов, семейств, как это принято в латинском, русском и других языках.

Таксономические названия – анализ – таксон – единая система

While studying Armenian zoological literature it has been determined that there is no precision, certainty in taxonomic names of animals. The same word-formative affix is given to different taxons or different word-formative affixes are given to the same taxonomic group, which is not acceptable in systematization. The comparative analysis of taxonomic names of vertebrates is presented in the article and the unitary system of word-formative affixes is suggested for classes, orders, families of vertebrates, as it is defined in Latin, Russian and in other languages.

Taxonomic names – the analysis – taxon – united system

Ինչպես հայտնի է, կենդանաբանական կարգաբանությունը կենսաբանության կարևոր բաժիններից մեկն է, որը կոչված է ստեղծելու կենդանական աշխարհի համակարգման միասնական հստակ համակարգ՝ որոշակի կանոններով դասավորված կենսաբանական տաքսոնների և համապատասխան անվանումների հիման վրա:

Կարգաբանության մեջ հաստատված է կանոնների որոշակի համակարգ, որը կարգավորում է այդ անվանումների գործածությունը: Կարգաբանության տաքսոնոմիական միավորները տաքսոններն են (տեսակ, ընտանիք, կարգ և այլն): Կենդանիների (ինչպես և բույսերի) գիտական անվանումների միասնական համակարգի կենսաբանական նոմենկլատուրայի հիմնադիր Կ.Լիննեյը (1707-1778) ձևակերպել է կենսաբանական տաքսոնների ստեղծման և կիրառման հիմնական սկզբունքները (որոնք հետագայում մշակվել են), որոնցով պետք է առաջնորդվել կենդանա-

բանական անվանումների ստեղծման, կիրառման, շտկման կամ հերքման ժամանակ: Տաքսոնների ճիշտ կիրառությունը և կենդանիների անվանման կանոնները կարգավորվում են բոլոր կենդանաբանների համար պարտադիր Կենդանաբանական նոմենկլատուրայի միջազգային կոդեքսով [15]:

Կոդեքսով ընդունված է լատիներեն որոշակի վերջավորություններ ունեցող տաքսոնոմիական միավորների հստակ համակարգ, քանի որ տաքսոնների բառակազմական միավորները (արմատ, վերջածանց, վերջավորություն) ցույց են տալիս կենդանու պատկանելությունը տվյալ կարգաբանական խմբին: Հետևաբար, հայերենում նույնպես պետք է կիրառվի կարգաբանական անվանումներ կազմելու որոշակի սկզբունք, ինչպես դա ընդունված է կարգաբանական հիմնական լեզվում՝ լատիներենում և դրա հիման վրա նաև՝ ռուսերենում և այլ լեզուներում:

Հայալեզու գրականության ուսումնասիրությունից և վերլուծությունից պարզվեց, որ ողնաշարավոր կենդանիների կարգաբանական անվանումների, բառակազմական միավորների կիրառման մեջ առկա են բազմաթիվ հակասություններ ու անճշտություններ՝ նույն բառակազմական միավորը տրվում է տարբեր տաքսոններին կամ տարբեր բառակազմական միավորներ՝ միևնույն կարգաբանական խմբին: Այսպես, մի դեպքում գրվում է «կարգ ճնճղուկազգիներ», «կարգ կռունկազգիներ» [2, 6, 10], մի այլ դեպքում՝ «ընտանիք շնագզիներ», «ընտանիք կատվազգիներ» և այլն [6, 10, 11]: Մեկ այլ օրինակ՝ -կերպեր վերջնարմատը կիրառում են և կարգի (տառեխակերպեր, նապաստակակերպեր և այլն) [4, 5], և՛ ենթակարգի (ծածանակերպեր) [10] անվանումներում, -նմաններ վերջնարմատը՝ և՛ կարգի (նապաստականմաններ) [8], և՛ ենթակարգի (տափակաձկնանմաններ) [9] անվանումներում, կամ էլ հոգնակի թվով են գրում և՛ կարգը [7, 8, 10], և՛ վերնակարգը, և՛ ենթակարգը, և՛ ընտանիքը [4, 6-8]: Մյուս կողմից՝ կան դեպքեր, երբ կարգն արտահայտված է հետևյալ վերջնարմատներով և վերջածանցներով՝ -նմաններ [2, 5, 7, 12], -կերպեր [4, 5, 9], -ավորներ [4, 8], -ազգիներ, -այիններ կամ հոգնակի թվով [2, 6, 9, 10]: Նույն բառակազմական միավորներն են կիրառվում նաև ենթակարգերի և ընտանիքների անվանումներում (աղ. 1):

Անհետևողականություն է նկատվում նույնիսկ նույն հեղինակի աշխատանքում՝ միևնույն կարգաբանական խմբի անվանման մեջ կիրառվում են տարբեր բառակազմական միավորներ: Այսպես Ս.Նատմովի «Ողնաշարավորների կենդանաբանություն» դասագրքի հայերեն թարգմանության մեջ [10] տրված է. «կարգ շնաձկներ», «կարգ ճնճղուկազգիներ», «կարգ փայտփորայիններ», «կարգ կիպսեղանմաններ» և այլն, «ընտանիք շներ», «ընտանիք սկյուռայիններ», «ընտանիք մկնազգիներ»:

Ղազարյանը [6-9] գրում է. «կարգ ձողաձկնակերպեր», «կարգ թուփականմաններ», «կարգ փայտփորազգիներ», «կարգ կտցարներ», «կարգ սիրենայիններ» և այլն: Դպրոցական դասագրքում [11] նշված են «կարգ սաղմոնանմաններ», «կարգ արագիլանմաններ», «կարգ նապաստականմաններ» և այլն, միաժամանակ՝ «կարգ լերկաձկներ», «կարգ տափակաձկներ», «կարգ շնաձկներ» և այլն: Մ. Համբարյանի դասագրքում [5] կարգի անունը ներկայացված է -կերպեր (օր.՝ նապաստակակերպեր), և -նմաններ (օր.՝ կետանմաններ) վերջածանցներով, ընտանիքը՝ կամ այիններ վերջածանցով (օր.՝ շնայիններ, կատվայիններ), կամ՝ հոգնակի թվով (օր.՝ կզաքիսներ): Զաքարյանը [3] գրում է. «ծածանակերպերի կամ ոսկրափամփուշտայինների կարգ», «փշալողակների կարգ», «տափակաձկնայինների կարգ» և այլն:

Գրականության մեջ հանդիպում են նաև հետևյալ թարգմանությունները՝ *семейство ядозубы* - թունատամների ընտանիք [8, 10], *семейство чешуенгие* - թեփուկատների ընտանիք, *семейство поясохвостье* - գոտկապոչների ընտանիք, *семейство цепкопалые* - կաղնաամատների ընտանիք և այլն [8], կամ *отряд ластоногие* - թիառների կարգ, *отряд неполнозубые* - թերատամների կարգ, *отряд многорезцовые* - բազմակտրիչների կարգ, *отряд трубочозубые* - խողովակաատամների կարգ, *отряд мозоленгие* - կոշտուկատների կարգ [5] և այլն:

Ինչպես հայտնի է, կենդանաբանական դասակարգման մեջ տաքսոններում ընդգրկվում են որոշակի հատկանիշներ կամ միատեսակ օրգաններ ունեցող կենդանիներ: Ռուսերենում, վերը թվարկված տաքսոնոմիական անվանումները կազմելիս, հետևողական են եղել նշված պահանջին, այսինքն տվյալ տաքսոնը ռուսերենում խմբավորում է որոշակի հատկանիշներ ունեցող մի շարք կենդանիների: Մինչդեռ հայերենում մի շարք դեպքերում ստացվում է, որ տաքսոնները խմբավորում են

ոչ թե կենդանիներին, այլ նրանց համար բնորոշ օրգանները՝ թունավոր ատամներ, թիաձև ոտքեր, թերզարգացած ատամներ և այլն:

Աղյուսակ 1. Ողնաշարավոր կենդանիների կարգաբանական անվանումների բառակազմական միավորները և առաջարկվող համակարգված ձևերը

Կարգաբանական անվանումներ	Գրականության մեջ գործածվող բառակազմական միավորները			Առաջարկվող բառակազմական միավորը
	լատիներեն	ռուսերեն	հայերեն	
Տիպ	-a	-овые	-ավորներ	- ավորներ
Ենթատիպ	-a -ia	-овые** -ые*	- ավորներ - եր	- ավորներ - եր
Վերադաս	-a -es	-ы -ые	- եր	- եր
Դաս	-a* -ia -ae -iae -mi -es	-овые** -ы -ые -уи	- ավորներ - եր	- ավոր - եր
Ենթադաս	-ii	-ые	-եր	- ավորներ - եր
Վերակարգ	-morpha	-ные -ы	-ներ -ավոր	- ներ
Կարգ	-formes -a*	-образные	- կերպեր - ավորներ - նմաններ - ազգիներ - այիններ - եր	- կերպեր - եր* - ավոր**
Ենթակարգ	-oidei	-видные	- կերպեր - ավորներ - նմաններ - այիններ - եր	- նմաններ
Ընտանիք	-idae	-овые -евые	- կերպեր - ավորներ - նմաններ - ազգիներ - այիններ - եր	- այիններ - եր* - ավոր**

* Եթե կենդանու անվանումը ցույց է տալիս հատկանիշ:

** Եթե կենդանու անվանումը կապված է որևէ օրգանի հետ:

Հաշվի առնելով այս իրավիճակը՝ մենք փորձել ենք որոշակիություն և հստակություն մտցնել հայերեն կենդանաբանական տերմինաբանության մեջ՝ կարգաբանական տերմինների բառակազմական միավորները կիրառելով այնպես, ինչպես դա արվում է այլ լեզուներում [13 - 16]:

Համաձայնեցնելով լատիներենի և ռուսերենի հետ՝ կարգի անվանման բառակազմական միավոր ընդունել ենք - **կերպեր** (-formes, - образные), ենթակարգի՝ **-նմաններ** (-oidei, - видные), ընտանիքի՝ **-այիններ** (-idae, - овые, -евые): Եթե կարգի կամ ընտանիքի անվանումը կապված է կենդանու որևէ օրգանի հետ (ատամներ, կնճիթ, կճղակ, սմբակ և այլն), ապա ավելացվում է **-ավոր** վերջածանցը (որը ցույց է տալիս տվյալ օրգանն ունենալու փաստը). օրինակ՝ ընտանիք թունատամավորներ, կարգ կնճիթավորներ, կարգ կճղակավորներ:

Եթե կարգի կամ ընտանիքի անվանումը ցույց է տալիս կենդանու որևէ հատկանիշ, օրինակ՝ գիշատիչ, կրծող, կռռան, լորտու (նշանակում է՝ լորձունքոտ, լյորձուն, շողիքոտ [1]), ապա այս դեպքում անվանումը տրվում է հոգնակի թվով՝ կարգ գիշատիչներ, կարգ կրծողներ, ընտանիք՝ կռռաններ, ընտանիք լորտուներ:

Եթե ընտանիքի անվանումը բաղկացած է երկու բառից, և դրանցից երկրորդը նույնպես ցույց է տալիս որևէ հատկանիշ, ապա վերջածանց չի ավելացվում, միայն

գրվում է հոգնակի թվով: Օրինակ, *семейство анчоусы светящиеся* հայերեն թարգմանելիս կլինի անձրուկներ լուսատու, իսկ *семейство анчоусовые*՝ ընտանիք անձրուկայիններ:

Այսպիսով, բացահայտելով կենդանաբանական գրականության մեջ հանդիպող տաքսոնոմիական անվանումների անհստակությունը և անմիօրինականությունը, անհրաժեշտություն առաջացավ շտկելու ստեղծված իրավիճակը:

Կարծում ենք, որ առաջարկված տաքսոնոմիական անվանումների միասնական համակարգը կնպաստի հայերեն լեզվով տրվող կենդանիների դասակարգման հստակեցմանը՝ իրեն տեղը գտնելով հետալսու հրատարակվող կենդանաբանական գրականության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աճառյան Հ.* Հայերեն արմատական բառարան: Բ հատոր, ԵԿ, Եր.: Երևանի համալս. հրատ., 698 էջ, 1973:
2. *Գրիգորյան Վ.Խ., Նազարեթյան Ս.Ս., Մարգարյան Լ.* Կենդանաբանություն, Եր.: Աստղիկ, 184 էջ, 2002:
3. *Ջաքարյան Խ.Ս.* Ողնաշարավորների կենդանաբանություն (ուս. ձեռն.): Եր.: Հայկ. պետ. մանկ. ինստ. հրատ., 88 էջ, 1979:
4. *Համբարյան Մ.Ե.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Հ. 3 (պարեգոտավորներ, անգանգներ, ձկներ), Եր., 207 էջ, 1999:
5. *Համբարյան Մ.Ե.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Հ. IV (թռչուններ, կաթնասուններ), Եր., 360 էջ, 2002:
6. *Ղազարյան Ռ.Ս.* Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան: Գիրք Բ: Թռչուններ: Եր.: Այր-Քե, 130 էջ, 1992:
7. *Ղազարյան Ռ.Ս.* Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան: Գիրք Ա: Կաթնասուններ: Եր.: Փյունիկ, 101 էջ, 1998:
8. *Ղազարյան Ռ.Ս.* Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան: Գիրք: Սողուններ և երկկենցաղներ: Եր.: Փյունիկ, 96 էջ, 1998:
9. *Ղազարյան Ռ.Ս.* Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան: Գիրք Դ: Ձկներ: Եր.: Մակմիլան-Արմենիա, 140 էջ, 2000:
10. *Նաումով Ս.Պ.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Պրակ 1, 2, Եր.: Հայպետուսմանկհրատ, 505 էջ, 1956:
Ջիվանյան Կ.Ա., Դանիելյան Ֆ.Դ., Ռուխկյան Ռ.Հ., Յավրույան Է. Կենսաբանություն: Կենդանիներ (դասագիրք հանրակրթ. դպր. 7-րդ դաս. համար): Եր.: Մակմիլան-Արմենիա, 160 էջ, 2000:
11. *Адамян М.С.* Птицы Армении. Дисс. на соиск. уч. ст. д.б.н. (в виде научного доклада), Ереван, 79 с., 1999.
12. *Жизнь животных, 4 Рыбы.* Под. ред. Т.С. Расса. М., Просвещение, 575 с., 1983.
13. *Майр Э.* Принципы зоологической систематики. Пер. с англ. М.: Мир, 456 с., 1971.
14. *Международный кодекс зоологической номенклатуры.* Л., Наука, 205 с., 1988.
15. *Соколов В.Е.* Пятизначный словарь названий животных. Млекопитающие. М., Русский язык, 352 с., 1984.

Ստացվել է 18.04.2011